



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հուլիսի 2024թ.

N ՄՈ/ 333 -Ա

ք. Արմավիր

«ԱՅԳԵՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Սուսաննա Խաչատրյանի 2024 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Խաչատրյանին տրամադրել ամենամյա արձակուրդի մասը՝ 2024 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Սուսաննա Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Սալբի Թարոյանին:
3. «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Սալբի Թարոյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սուսաննա Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



2024-07-15 17:59:31 GMT+4  
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից



ՄԱՐԶՊԵՏ

Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ